



ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

ԾՆՈՒԿՈՒԷՆ ԵՏՔ ԵՐՈՐՈՂ ԿԻՐԱԿԻ
26 ՅՈՒՆԻՍԻՐ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցում	Էջ 2
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	Էջ 3
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 31)	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (58.13-59.7)

Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

Միթէ կը կարծէք թէ Տէրը ձեզ փրկելու կարողութիւնը չունի՞, կամ փակե՞ց իր ականջը, որպէսզի ձեզ չլսէ:

Ո՛չ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ իրամատ բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ...
Ո՛չ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ իրամատ բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ...

Են եւ ձեր մատները՝ մեղքով. ձեր շրթները սուտ խօսեցան, ձեր լեզուները անիրաւութեան գործիք եղան: Չկայ մէկը որ արդարութիւնը պաշտպանէ. չկայ մէկը

որ իրաւունքով դատ տեսնէ. դուք ձեր շահերուն համար սուտերու կ'ապաւինիք եւ ուրիշները կը խաբէք. չարութիւն կը յղանաք եւ մեղք կը ծնանիք: Ձեր լարած դաւերը քարբերու հակիթներ են, որոնցմէ ուտել ուզողը մահ կը գտնէ, որովհետեւ իժ է անոնց մէջինը: Ձեր հիւսած դաւերը սարդի ոստայն են, որոնցմէ հագուստ չ'ելլեր եւ բանի չեն ծառայեր: Դուք բնաւ չէք կրնար արդարանալ ձեր գործերով, որովհետեւ ձեր գործերը անօրէն գործեր են եւ ձեր ձեռքէն միայն անիրաւութիւն կու գայ: Պատրաստ էք միշտ չարիք գործելու, անմեղ արիւն թափելու չէք վարանիր. միայն մեղաւոր խորհուրդներ կը սնուցանէք եւ ձեր այս ընթացքով կործանումի ու դժբախտութեան պատճառ կ'ըլլաք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (4.12-5.10)

Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալս հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ որ մարգարէական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երէցները ձեռք դրին

Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ:

քու վրադ: Այս ըսածներուս մասին խորհէ եւ զանոնք գործի վերածելու աշխատէ, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու յառաջդիմութիւնդ: Ուշագիւր եղիր թէ՛ դուն քեզի եւ թէ՛ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այսպէս մնա՛, գիտնալով որ այդ ձեւով ո՛չ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ծեր մէկը, այլ մեղմութեամբ յորդորէ զայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառաւները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դիր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցիր անոնց: Պատուէ եւ խնամէ ա՛յն այրիները որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը զաւակներ ու թոռներ ունի, պէտք է անո՛նք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար ա՛յդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին այն է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշերցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցընէ իր ժամանակը: Իսկ հանգստութիւն ու վայելք փնտռող այրին կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր որպէսզի անարատ ըլլան: Իսկ մէկը որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:

Այրի սեպէ միայն ա՛յն կիները որոնք վաթսուներ անց են, մէկ անգամ ամուսնացած, եւ բարի գործերով վկայուած են, այսինքն՝ զաւակներ մեծցուցած, հիւրասէր եղած, ճամբորդ հաւատացեալներուն խոնարհաբար ծառայած, նեղութեան մէջ եղողներուն օգնած, եւ իրենք զիրենք ամբողջութեամբ բարեգործութեան տուած են:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(3.13-21)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
«Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ զրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդին չհաւատալուն համար:

... Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ:

«Եւ դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

Հոգեհանգստեան պաշտօն խնդրելու համար, հաճեցէք շարքուսան մէջ հեռաձայնել քարտուղարութեան 514 331-5445 կայան 202:

Անդրադարձներ Եւ Խորհրդածույթիւններ

Չեկուցում Թիւ 4.- Տե՛ս Չեկուցում Թիւ 1-ը, Կիրակնօրեայ թերթիկի (ԿԹ) 22 Դեկտեմբեր 2024-ի համարին մէջ: Չեկուցում Թիւ 2-ը՝ ԿԹի 12 Յունուար 2025-ի համարին մէջ: Չեկուցում Թիւ 3-ը՝ ԿԹ-ի 19 Յունուար 2025-ի համարին մէջ: Կը շարունակեմ ամփոփել Ս. Պատարագի մասին հինգ դասախօսութիւններով շարքը:

Հայ մատենագրութեան մէջ, Ս. Պատարագին տրուած այլազան անուանումներ, աշխարհաբարով. Գոհութեան Պատարագ, Օրինութեան Պատարագ, Խաչական Փրկութեան Պատարագ, Հաշտութեան Պատարագ, Բրիստոսի Չենում, Ս. Խորհուրդ, Գոհութեան Խորհուրդ, Պատարագի Խորհուրդ, Չենումի Խորհուրդ, Սոսկալի Խորհուրդ, Ահաւոր Խորհուրդ, Մեղսաքաւիչ եւ Կենդանարար Խորհուրդ, Աստուածային Խորհուրդ, Փրկական Խորհուրդ, եւ այլն:

Ներկայիս՝ ընդհանրացած է պարզապէս ըսել՝ «Պատարագ»: Ծնուցումներու մէջ հանդիպելի է «Սուրբ եւ Անմահ Պատարագ» անուանումին:

Ս. Պատարագի «պարզագոյն ձեւ»ը, ինչպէս ըսուած է, կը գտնենք համատեսական աւետարաններուն, եւ Պօղոս առաքեալի կորնթացիներուն գրած առաջին նամակին մէջ _ Մտ 26.17-30, Մր 14.12-16, Ղկ 22.7-20, Ա. Կր 11.23-29: Անիկա Յիսուսի կատարածն է Վերջին Ընթրիքին: Երբ գանոնք կը բաղդատենք՝ կը տեսնենք, թէ Վերջին Ընթրիքի երկու նկարագրութիւն ունինք: Կը թելադրեմ, որ սոյն զեկոյցին ընթերցողը կարդայ երեք աւետարաններուն եւ առաքելական նամակին

նշեալ գլուխներուն համարները: Չմտայ խնդիրին մէջ, թէ Վերջին Ընթրիքը ո՞ր օրուան մէջ կատարուած է: Խնդիրը ծագած է Չորրորդ աւետարանի՝ Յովհաննէսի ժամանակացոյցին տարբերութենէն: Կարելի է հաստատ ըսել, թէ Վերջին Ընթրիքին հիմնական նշանակութիւնը գատկական է: Յիսուս ի մտի ունեցած է Ելքի գիրքին կամ Հին Ուխտի Չատկուայ գառնուկը, եւ իր ինքնընծայումը տեսած է որպէս Նոր Ուխտի Չատկուայ գառնուկին զենումը եւ ճաշակումը: Ուշագրաւ է նաեւ, որ թէեւ ընթրիքին գառնուկ կերան, բայց Յիսուս ո՛չ թէ գառնուկէն միսի կտոր մը առնելով՝ «Ասիկա իմ մարմինս է», ըսաւ, այլ՝ հաց առնելով ըսաւ: Եւ այսպիսով՝ իր ինքնընծայումին Պատեքեան նշանակութիւն մը, այսինքն՝ դատաստանի եւ ազատագրութեան նշանակութիւն մը տալով, փափաքեցաւ զայն նաեւ առնչել Բաղարջակերաց տօնին, այսինքն՝ Եգիպտոսէ կամ մեղքերու գերութենէն արտորանօք ելքին:

Արդարեւ, Յիսուսի ինքնընծայումը մեղքերու գերութեան մէջ չդանդաղելու, այլ ելքի կամ փրկութեան համար է, եւ է Աստուծոյ փրկարար ողորմութեան մասին, եւ ոչ՝ զոհի: Հացը խորհրդանշանն է այն ողորմութեան:

ԳՔ
(Շարունակելի 4)





ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹԵՆԵՐ ԾԷՆՔՍԻԷՆ

ՀԵՊԻՏԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԽՐԳԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՆՈՒՏԵԱՆԻ

ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԴ՝ ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆԶԻՆ ՄԷՁ

Քաղցր Տէր, յարութենէդ ետք աշակերտներուդ մտքերը բացիր՝ սրբազան գիրքերը հասկնալու: Անոնց յստակացուցիր, թէ Մովսէս, մարգարէները, եւ սաղմոսերգուն քու մասիդ խօսած էին: Անոնց յայտնեցիր տնօրինուած մեծ խորհուրդը թէ՛ պիտի չարչարուէիր ու փառքդ մտնէիր:

Այս գիշեր կ'աղօթեմ քեզի սրբազան գիրքերու մշտական աւելի խորունկ հասկացողութեան համար, եւ մնայուն աճուն արթնագիտակցութեան, թէ դուն կեդրոնին ես, կամ - Վինսընթ Վան Կոկի խօսքերով - թէ քու Աւետարանդ այն լերան զագարթն է, որուն լանջերն են Հին Կտակարանն ու առաքելականն ամակները: Թող որ սաղմոսներուն, մարգարէներուն ու Իսրայէլի ժողովուրդի վսեմ պատմութեան մէջ տեսնեմ ներկայութիւնդ, եւ տուր որ այդ տեսողութիւնը օգնէ ինծի՝ աւելի լաւ հասկնալու իմ իսկ պատմութիւնս, իմ պայքարս ու ցաւս:

Կը խնդրեմ, Տէր, միացիր ինծի ճամբուս վրայ, մտիր գոց սենեակս, եւ ինձմէ հեռացուր յիմարութիւնս: Բաց միտքս ու սիրտս՝ կեանքիս մէջ գործօն ներկայութեանդ վսեմ խորհուրդին, եւ տուր ինծի քաջութիւնը՝ օգնելու ուրիշներուն, որպէսզի իրենց կեանքերուն մէջ ներկայութիւնդ գտնեն:

Շնորհակալութիւն, Տէր, այս օրուան համար:

(Շար. 31)



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
Առաքելաբան Մայր Եպիսկոպոս



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Մանուկները Աստուծոյ
Նուիրելու Տօն

Նախատօնակ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2025

Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 19.00-ին
ապա՛ մանուկներու նուիրում եւ մոմակառութիւն